



Կալիֆորնիայի Պաշտպանության և Փաստաբանության համակարգ
Անվճար հեռախոսահամար (800) 776-5746

Հաշմանդամ անձանց խնամակալության սահմանափակումներ և այլընտրանքներ

Հոկտեմբեր 2015, Հրատ.՝ #5578.10

1. Ի՞նչ է հաշմանդամ անձանց խնամակալությունը (conservatorship):

Հաշմանդամ անձանց խնամակալությունը դատական գործընթաց է, որտեղ դատավորը որոշում է, թե արդյոք Դուք ի վիճակի եք կամ չեք հոգալ Ձեր առողջության, սննդի, հագուստի, տան, ֆինանսական միջոցների կամ անձնական կարիքների համար: Դատավորը կարող է այս կարևոր իրավունքներից մի քանիսը Ձեզնից վերցնել: Դատավորի կողմից կարող է պատասխանատու անձ նշանակվել՝ Ձեր փոխարեն որոշումներ կայացնելու համար: Դատարանն այս անձին կոչում է «Հաշմանդամ անձի խնամակալ» (conservator): Դատարանը Ձեզ կոչում է «խնամարկու» (conservatee): Հաշմանդամ անձանց խնամակալությունը սահմանված է 18 և ավելի տարիք ունեցող անձանց համար:

2. Որո՞նք են հաշմանդամ անձանց խնամակալության տարբեր տեսակները:

Կալիֆորնիայում գոյություն ունեն հաշմանդամ անձանց խնամակալության մի քանի տեսակներ.

- Հաշմանդամ անձանց խնամակալության կտակի ընդհանուր վավերացում (General Probate Conservatorship)
- «Lanterman Petris»-ի կարճ ակտ (Lanterman Petris Short Act)
- Մտավոր դժվարություններ ունեցող հաշմանդամ անձանց խնամակալություն (Dementia Conservatorship)
- Հաշմանդամ անձանց սահմանափակ խնամակալություն (Limited Conservatorship)

3. Ի՞նչ է սահմանափակ խնամակալությունը:

Սահմանափակ խնամակալությունը խնամակալության այնպիսի տեսակ է, որն ստեղծված է զարգացման խնդիրներ ունեցող հաշմանդամ անձանց համար: Այն ստեղծվել է՝ երաշխավորելու, որ Դուք հնարավորինս ինքնավստահ և անկախ եք: Այն Ձեզ թույլ է տալիս որոշ իրավունքներ վերապահել, որպեսզի Դուք կարողանաք Ձեր կյանքի մասին որոշ որոշումներ կայացնել: Դատավորը պետք է որոշի, թե խնամակալն ինչ որոշումներ կկայացնի:

4. Ո՞վ կարող է նշանակվել որպես Ձեր սահմանափակ խնամակալ:

Սահմանափակ խնամակալը պետք է 18 տարեկան կամ ավելի լինի և պետք է գործի Ձեր լավագույն շահերից: Դուք կարող եք առաջարկել մեկին, ում ճանաչում եք, օրինակ՝ ընտանիքի անդամ կամ ընկեր, բայց դատավորը պետք է որոշի, թե ով պետք է լինի Ձեր սահմանափակ խնամակալը: Դատավորը կարող է մեկից ավելի սահմանափակ խնամակալ (համախնամակալներ) նշանակել: Որոշ դեպքերում մասնավոր արհեստավարժ խնամակալ է նշանակվում: Վարչաշրջանի հանրային խնամակալը կարող է նշանակվել, եթե ուրիշ որևէ մեկը մատչելի չլինի:

5. Ինչպե՞ս է ստեղծվում սահմանափակ խնամակալությունը:

- Առաջարկվող խնամակալը դատարանին միջնորդություն է ներկայացնում:
- Միջնորդության պատճենը պետք է տրվի Ձեզ:
- Միջնորդության պատճեններն ուղարկվում են Ձեր ազգականներից մի քանիսին և գործակալություններին, ինչպիսին է տարածքային կենտրոնը (regional center):
- Ձեր գործին դատական քննիչ է նշանակվում:
- Դուք պետք գնաք լսմանը, եթե դատավորը բացառությունը չհաստատի:
- Դատավորը փաստաբան կնշանակի՝ Ձեզ ներկայացնելու համար:

6. Ո՞րն է դատական քննիչի դերը հաշմանդամ անձանց սահմանափակ խնամակալության գործընթացում:

Դատական քննիչը պետք է.

- Ձեզ բացատրի և Ձեզ հետ վերանայի միջնորդագիրը:
- Ձեզ հետ հարցազրույց վարի և Ձեզ պատմի հաշմանդամ անձանց խնամակալության գործընթացի մասին:
- Որոշի, թե արդյոք Դուք՝
 - ի վիճակի եք մասնակցել լսմանը,
 - ցանկանում եք կասկածի տակ առնել խնամակալությունը,
 - դեմ եք առաջարկվող խնամակալին կամ նախընտրում եք մեկ ուրիշի:

7. Ո՞րն է տարածքային կենտրոնի դերը հաշմանդամ անձանց սահմանափակ խնամակալության մեջ:

Ձեր համաձայնությամբ տարածքային կենտրոնը պետք է Ձեզ գնահատի և դատարանին հաշվետվություն ներկայացնի:

Հաշվետվությունը պետք է ներառի՝

- Ձեր հաշմանդամության բնույթը/աստիճանը:

- Ի՞նչ աջակցության կարիք ունեք:
- Ձեր ֆիզիկական վիճակը:
- Ձեր մտավոր վիճակը և սոցիալական բարեկեցությունը:
- Որոշակի իրավունքներին վերաբերող առաջարկներ, որոնք Դուք խնդրել եք միջնորդության մեջ:

Եթե առաջարկվող խնամակալը ծառայություն տրամադրող է, ապա հաշվետվությունը պետք է՝

- մեկնաբանություններ ներառի առ այն, թե արդյոք ծառայություն տրամադրողը հարմար կլինի՝ Ձեր կարիքները բավարարելու:
- հաշվետվության պատճենը պետք է ուղարկվի Ձեզ և Ձեր փաստաբանին՝ լուսմից առնվազն 5 օր առաջ:

8. Որո՞նք են իմ իարավուները սահմանափակ խնամակալության գործընթացում:

Դուք իրավուներ ունեք՝

- Տեղեկացվել, թե ինչ իրավունքներ կվերցվեն և խնամակալությունն ինչպես կազդի Ձեր իրավունքների վրա:
- Ստանալ խնամակալության միջնորդագրի ծանուցումը և պատճենը՝ դատական լուսմից առնվազն 15 օր առաջ:
- Ձեզ ներկայացնող փաստաբան ունենալ: Եթե Դուք փաստաբան չունեք, ապա դատավորը պետք է Ձեզ փաստաբան նշանակի:
- Ստանալ Ձեր ընտանիքի, ընկերների, տարածքային կենտրոնի և այլոց կողմից դատավորին հանձնված որևէ հաշվետվության պատճենը:
- Ներկա լինել խնամակալության լսմանը:
- Կասկածի տակ դնել խնամակալությունը:
- Գործը երդվյալ ատենակալների դատարանում քննել, եթե Դուք խնդրեք:

խնդրեք:

9. Սահմանափակ խնամակալության դեպքում դատավորը ո՞ր իրավունքները կարող է վերցնել:

Դատավորը կարող է վերցնել այս իրավունքներից մի քանիսը կամ բոլորը`

- Բնակության վայրը որոշելու իրավունքը.
- Գաղտնի արձանագրություններից օգտվելու իրավունքը.
- Ամուսնանալու իրավունքը.
- Պայմանագիր կնքելու իրավունքը.
- Բուժման համար համաձայնություն տալու իրավունքը.
- Սոցիալական և սեռական կապերը վերահսկելու իրավունքը.
- Կրթական որոշումներ կայացնելու իրավունքը.

10. Ինչպե՞ս կարող եմ ցույց տալ, որ խնամակալի կարիք չունեմ:

Դուք կարող եք ցույց տալ, որ ի վիճակի եք հոգալ Ձեր առողջապահական, սննդի, հագուստի, տան, ֆինանսական կամ անձնական կարիքները: Դուք կարող եք օժանդակություններից և ծառայություններից օգտվել, ինչպիսիք են խնամակալությունների այլընտրանքները, այդ թվում օժանդակվող որոշումների կայացում` Ձեզ օգնելու համար: Խնամակալության այլընտրանքների համար տե՛ս հարց 12-ը:

11. Եթե դատարանը որոշի, որ ես սահմանափակ խնամակալի կարիք ունեմ, որո՞նք կլինեն խնամակալի պարտականությունները և պատասխանատվությունը:

Խնամակալը խիստ պատասխանատվություն ունի` կատարելու այն, ինչ դատարանը նշանակել է նրան կատարելու, որն է` Ձեր լավագույն շահերից ելնելով որոշումներ կայացնել: Սա կարող է ներառել`

- Օգնել Ձեզ աջակցության ծառայություններ, կրթություն, բժշկական և այլ ծառայություններ ստանալ, որոնք կօգնեն Ձեզ՝ հնարավորինս անկախ լինել:
- Արձագանքել ճգնաժամային իրավիճակներին, եթե անհրաժեշտ է:
- Օգնել Ձեզ՝ կառավարել Ձեր անձնական և ֆինանսական կարիքները:

12. Որո՞նք են սահմանափակ ինամակալության ավելի քիչ սահմանափակող այլընտրանքները:

Մինչ որևէ անձ կկարողանա դատարանին ինդրել, որպեսզի Ձեր ինամակալը դառնա, այդ անձից օրենքով պահանջվում է ի նկատի ունենալ այլընտրանքները: Այլընտրանքները կարող են հետաձգել կամ վերացնել ինամակալության անհրաժեշտությունը:

Ընդհանուր այլընտրանքներ

Օժանդակվող որոշումների կայացում.

Օժանդակվող որոշումների կայացումն (SDM, Supported Decision-Making) այն է, երբ Դուք օգտվում եք Ձեր վստահելի ընկերներից, ընտանիքից և արհեստավարժ անձանցից՝ օգնելու Ձեզ հասկանալ իրավիճակները և Ձեր կյանքի ընտրությունները: Այն Ձեր ինքնուրույնությունը բարձրացնելու միջոց է: Այն խրախուսում է Ձեզ և ուժ է տալիս՝ Ձեր կյանքի մասին հնարավորինս շատ որոշումներ կայացնել: SDM-ն այն է, թե ինչպես են շատ չափահասներ ամենօրյա որոշումներ կայացնում: SDM-ն նաև՝

- օգնում է Ձեզ, որպեսզի Ձեր կյանքում ինչ-որ բաներ տեղի ունենան:
- Օգնում է Ձեզ՝ ընտրություն կատարել, թե որտեղ, ինչպես և ում հետ Դուք պետք է ապրեք:

- Օգնում է Ձեզ ընտրություն կատարել, թե որտեղ եք Դուք ցանկանում աշխատել:
- Օգնում է Ձեզ գործել Ձեր կյանքում` ինչ-որ մեկի` Ձեզ համար գործելու փոխարեն:
- Թույլ է տալիս Ձեզ ավելի դրական կյանքի որակ ունենալ:
- Բարձրացնում է Ձեր աշխատանքային հնարավորությունները, ամենօրյա կյանքի ինքնուրույնությունը և հասարակությունում ներառումը:

Երկարատև լիազորագիր (Durable Power of Attorney).

Սա իրավաբանական փաստաթուղթ է, որը Դուք տալիս եք ինչ-որ մեկին, ում վստահում եք օրինական իրավունքները` Ձեզ համար որոշում կայացնելու նպատակով: Այն միջոց է Ձեզ համար` աջակցություն և ծառայություններ ստանալու, որոնց կարիքն ունեք` ինքնուրույն ապրելու համար: Դուք կարող եք ինչ-որ մեկին իրավունք տալ` որոշում կայացնել, օրինակ` բժշկական կամ ֆինանսական, կամ նրան իրավունք տաք երկու տեսակ որոշումները կայացնելու համար:

Այլ ընդհանուր այլընտրանքներ.

- Դուք կարող եք միանալ շահերի ինքնապաշտպանական խմբերին, ինչպիսին է «People First»-ը կամ շահերի ինքնապաշտպանության վերապատրաստում անցնել` օգնելու Ձեզ սովորել, թե ինչպես պետք է հաղորդակցվել և սատարել այն ամենը, ինչի կարիքը Դուք ունեք:
- Դուք կարող եք Ձեր ընտրությունները գրել տալ Ձեր Անհատական ուսումնական պլանում (IEP, Individualized Education Program) կամ Անհատական ծրագրի պլանում (IPP, Individualized Program Plan):
- Դուք կարող եք Ձեր IEP-ի կամ IPP-ի համար պատրաստվել` դերակատարումներով վարժանքներ կատարելով կամ խոսելով այն կարիքների և ցանկությունների մասին, որոնք անչվում են ինչ-որ մեկին, ում Դուք վստահում եք:
- Դուք կարող եք հսկիչներ գտնել, որոնք կօգնեն Ձեզ` որոշումներ կայացնել:

Առանձնահատուկ այլընտրանքներ

Ձեր IEP-ի կամ IPP-ի ծառայություններ ստանալու այլընտրանքներ.

Դուք իրավունք ունեք Ձեր IEP-ի կամ IPP-ի հանդիպմանը հրավիրել մարդկանց, ովքեր կաջակցեն Ձեզ՝ սատարելու այն ծառայությունների հարցում, որոնց կարիքը Դուք ունեք՝ ինքնուրույն լինելու համար: Շահերի պաշտպանները կարող են լինել՝

- Ձեր ծառայությունների համակարգողը:
- Ձեր ընտանիքը և Ձեր աջակցության շրջանակի մարդիկ:
- Շահերի վերապատրաստված պաշտպան:

Այլընտրանքներ՝ որոշելու, թե որտեղ և ում հետ եք Դուք ապրելու.

- Ձեր ցանկությունները և ընտրանքները/տարբերակները քննարկեք ինչ-որ մեկին հետ, ում Դուք վստահում եք, օրինակ Ձեր՝
 - Աջակցության (շրջապատի այն մարդկանց, ում Դուք վստահում եք և ովքեր Ձեզ աջակցում են):
 - Ինքնուրույն ապրելու ծառայությունների (ILS, Independent Living Services) մատակարար:
 - Ապրելու օժանդակ ծառայությունների (SLS, Supported Living Services) մատակարար:
 - Խնամքի համայնքային հաստատություն կամ խնամքի միջնորդ հաստատության (Community Care Facility or Intermediate Care Facility) անձնակազմ:
- Ձեր վստահած անձանց հարցրեք, թե ինչպես կարող եք վարձի համար օգնություն ստանալ կամ դիմել Հանրակացարանի աջակցության համար (Public Housing Assistance):
- Պաշտպանեք Ձեր շահերը Ձեր IPP-ում և Ձեր ընտրանքները գրել տվեք Ձեր IPP-ում:

Այլընտրանքներ՝ Ձեր գաղտնի տեղեկություններից օգտվելու համար:

Եթե ցանկանում եք, որ Ձեր վստահած անձն ստանա Ձեր գաղտնի տեղեկությունները, Դուք կարող եք թույլտվություն տրամադրել՝ այս ընտրանքներից մեկն օգտագործելով:

- Առողջապահության ապահովագրության մատչելիության և հաշվետվության (HIPAA, Health Insurance Portability and Accountability Act) բժշկական հրապարակման ձևաթուղթ ստորագրել:

- Համաձայնություն ստորագրել՝ տեղեկությունների կամ արձանագրությունների ձևաթուղթ հրապարակելու համար:

- Դուք և մեկ այլ անձ կարող եք միասին զանգահարել գործակալություն և Դուք կարող եք հեռախոսով տրամադրել Ձեր համաձայնությունը:

Այլընտրանքներ՝ օգնելու Ձեզ կառավարել Ձեր դրամը.

- Դուք կարող եք ֆինանսական հարցերի համար լիազորագիր ստորագրել: Սա լիազորում է Ձեր կողմից վստահված ինչ-որ մեկին՝ Ձեր ֆինանսական հարցերի կամ դրամի վերաբերյալ որոշումներ կայացնել: Ֆինանսական հարցերի լիազորագիրը պետք է նոտարի կողմից հաստատված լինի: Դուք կարող եք այն դադարեցնել, երբ որ ցանկանաք:

- Դուք կարող եք որևէ մեկին ընտրել՝ Ձեր Ապահովության հավելյալ եկամտի (SSI, Supplemental Security Income)/Սոցիալական ապահովության (Social Security) նպաստների ներկայացուցիչ վճարումն ստացող անձ լինելու համար:

- օրենքներ կան՝ օգնելու Ձեզ պաշտպանել Ձեր SSI/Social Security նպաստները:

- Դուք կարող եք ծառայությունները գրել տալ Ձեր IPP-ում՝ օգնելու Ձեզ կառավարել Ձեր դրամը՝ Ձեր ինքնուրույն ապրելակերպի ծառայությունների աշխատակցի պես:

- Հատուկ կարիքների (Special Needs Trust) ինսամառություն կարող է ստեղծվել Ձեզ համար: Ինսամառուն այն դեպքում կկառավարի Ձեր դրամը:

- Համատեղ բանկային հաշիվներ. Դուք կարող եք Ձեզ վստահելի որևէ անձի հետ համատեղ բանկային հաշիվ կարգավորել՝ օգնելու Ձեզ չեքեր գրել, ավանդներ կատարել կամ դրամ հանել:

Այլընտրանքներ` Ձեր առողջապահական կարիքների դեպքում օգնելու համար.

- Դուք կարող եք Առողջապահական ինսամքի ընդլայնված հանձնարարական (Advance Health Care Directive) ստորագրել, որպեսզի հնարավոր լինի հետևել Ձեր ցանկություններին: Այն պահանջում է մեկ կամ երկու վկայի ստորագրություն կամ այն պետք է նոտարով հաստատվի և կարող է փոխվել կամ դադարեցվել, երբ որ Դուք ցանկանաք:
- Քանի որ Դուք հիվանդն եք, բժիշկները պետք է Ձեզ ասեն բուժման վտանգները և օգուտները, բուժման այլ մատչելի տարբերակներ և այն, թե ինչ տեղի կունենա, եթե բուժում չլինի:
- Եթե Դուք ի վիճակի չեք որոշում կայացնել.
 - Ձեր ամենամոտ ազգականը, ով հասանելի է (օրինակ` ծնողը) կարող է առողջապահական ինսամք լիազորել:
 - Ձեր տարածքային կենտրոնը կարող է որոշ բժշկական, վիաբուժական կամ ատամնաբուժական ինսամք լիազորել որոշ իրավիճակներում:
 - Բժիշկները կամ ատամնաբույժները կարող են արտակարգ իրավիճակի դեպքում որոշումներ կայացնել:
- Դատարանի լիազորություն է պահանջվում առանձնահատուկ բժշկական գործողությունների համար:
- Եթե Դուք միջին ինսամքի հաստատության (ICF, Intermediate Care Facility)/որակյալ ինսամքի հաստատության (SNF, Skilled Nursing Facility) բնակիչ եք, ապա որևէ միջնուղային թիմ կարող է բուժում հաստատել, եթե իրավաբանական լիազորություն ունեցող որևէ մեկը հասանելի չէ` բժշկական որոշումներ կայացնելու համար:

Այլընտրանքներն են` օգնելու Ձեզ սոցիալական/սեռական հարաբերություններում.

Ձեր IEP-ի կամ IPP-ի ծառայությունները կարող են օժանդակություններ ներառել` օգնելու Ձեզ որոշակի հարաբերություններում, ինչպիսիք են` խորհրդատվություն, ինքնուրույն ապրելակերպի ծառայություններ և կյանքի օժանդակող ծառայություններ: Դուք նաև կարող եք կրթություն

ստանալ սոցիալական հմտությունների, ապահովության իրազեկության ոլորտներում, ինչպես նաև այլոց հետ առողջ հարաբերություններ ունենալու հարցում: Սա կարող է ներառել աղջիկ և տղա ընկերների հետ հարաբերություններ:

Այլընտրանքներ` օգնելու Ձեզ կրթական որոշումների հարցում.

Դուք կարող եք որևէ մեկին, ում վստահում եք, իրավունք տալ Ձեզ համար կրթական որոշումներ կայացնել: Դուք կարող եք երկարատև լիազորագիր կամ կրթական որոշումներ կայացնող հաստատության նշանակում ունենալ:

Այլընտրանքներ` օգնելու Ձեզ դատարանում գործ ներկայացնել.

Եթե Դուք դատարանում գործ ներկայացնելու կարիք ունեք, դատարանը կարող է ինչ-որ մեկին նշանակել` օգնելու Ձեզ խոսել Ձեր փաստաբանի հետ և դատարանի հարցերով զբաղվել: Այս անձը կոչվում է դատական գործի խնամակալ-ներկայացուցիչ (Guardian ad Litem): Guardian ad Litem-ը Ձեր տեղը կզբաղեցնի դատարանում, եթե Դուք ի վիճակի չեք դատարան գնալ կամ ի վիճակի չեք հասկանալ:

13. Ես ստիպվա՞ծ եմ դատական վճարումներ կամ ծախսեր վճարել իմ խնամակալության գործի համար:

Դատարանը կորոշի, թե արդյոք Դուք պետք է լրացման վարձավճարներ, իրավաբանական ծառայությունների համար նախատեսված վճարումներ և դատարանի ծախսեր վճարեք:

14. Սահմանափակ խնամակալության դեպքում որ իրավունքները մատչելի ՉԵՆ:

Խնամակալը չի կարող`

- Վերահսկել աշխատանքից ստացված աշխատավարձերը.
- Հաստատել վնասական բժշկական բուժումը.
- Ձեզ դեղորայքային բուժում ստիպել.
- Ձեզ ամլացնել, որպեսզի չկարողանաք երեխա ունենալ.
- Ստիպի Ձեզ դատի տալ որևէ հաստատության.
- Համաձայնել էլեկտրացնումային բուժման (ECT, electroconvulsive shock therapy).
- Համաձայնել հոգեբուժության.
- Որևէ այլ իրավունք ունենալ, որն առանձնահատուկ կերպով ՉԻ հրահանգվել դատարանի կողմից:

15. Սահմանափակ լիազորության մեջ ես ի՞նչ իրավունք ունեմ:

Դուք շարունակում եք ունենալ Ձեր հետևյալ իրավունքները.

- Ձեր սեփական աշխատավարձերը վերահսկել.
- Կտակ կազմել կամ փոխել կտակն առ այն, թե ով պետք է ստանա Ձեր անձնական իրերը, երբ Դուք մահանաք.
- Ամուսնանալ, եթե դատավորն առանձնահատուկ կերպով այդ իրավունքը Ձեզնից չվերցնի.
- Անձնական փոստով նամականեր ստանալ.
- Բվեարկել, եթե դատավորն առանձնահատուկ կերպով այդ իրավունքը Ձեզնից չվերցնի.
- Փաստաբանի միջոցով ներկայացվել.
- Նոր խնամակալ խնդրել.
- Խնամակալության ավարտ խնդրել:

16. Ի՞նչ կարող եմ անել, եթե համաձայն չեմ իմ խնամակալի հետ կամ ցանկանում եմ վերջ տալ սահմանափակ խնամակալությանը:

- Չանգահարեք Ձեր փաստաբանին, կտակի հարցով դատական քննիչին, տարածքային կենտրոն, ամենօրյա ծրագրին, օժանդակող թիմին կամ Հարաբերությունների կանոնակարգման կազմակերպություն (OCRA, Organization Comprised of Regulatory Affairs):
- Դատական լսում խնդրեք:

- Ձեր տարածքային կենտրոնի ծառայությունների համակարգողից (regional center service coordinator) IPP հանդիպում խնդրեք:

17. Ե՞րբ է ավարտվում սահմանափակ ինամակալությունը:

- Երբ դադարեցվի դատավորի կողմից:
- Խնամակալի կամ ինամառուի մահվան դեպքում:
- Դատական վճիռ, համաձայն որի սահմանափակ ինամակալության կաիրք չկա այլևս:
- Խնամակալը միջնորդագիր է ներկայացնում դատարանին՝ հրաժարական տալու համար:

18. Ինչպե՞ս կարող է սպասառուների իրավունքների պաշտպանն (Clients' Rights Advocate) ինձ օգնել:

Սպասառուների իրավունքների պաշտպանը կարող է օգնել հետևյալ կերպ՝

- Ձեր իրավունքների մասին Ձեզ պատմելով:
- Ձեզ կամ Ձեր ընտանիքին պատմելով սահմանափակ ինամակալության այլընտրանքների մասին:
- Խոսելով կամ օգնելու Ձեզ խոսել Ձեր փաստաբանի, կտակի գործով դատական քննիչի և այլ մարդկանց հետ, ովքեր կարող են օգնել Ձեզ:

19. Ինչպե՞ս կարող եմ իմանալ, որ սահմանափակ ինամակալը նշանակվել է դատավորի կողմից:

- Դուք կստանաք դատավորի հրամանի պատճենը:
- Դատավորի հրամանում կասվի, թե ինամակալին ինչ իրավունքներ են տրվել:

20. Ինչպե՞ս ուրիշները պետք է իմանան, որ ես ինամակալ ունեմ:

Խնամակալը պետք է այլ մարդկանց տրամադրի **Խնամակալության նամակների (Letters of Conservatorship)**

պաշտոնական պատճենը: Պաշտոնական պատճենը պետք է պարունակի ինսամակալության նամակների վկայագրերի լրացված **բաժինը**` մինչև նրանց որպես ինսամակալ վերաբերվելը:

Չավեյալ տեղեկությունների համար գանգահարեք

Disability Rights California

Անվճար` (800) 776-5746

Սպասառուների իրավունքների պաշտպանության գրասենյակ

Անվճար` (800) 390-7032

Disability Rights California-ն ֆինանսավորվում է տարատեսակ աղբյուրներից. ֆինանսավորողների ամբողջական ցանկի համար այցելե՛ք <http://www.disabilityrightsca.org/Documents/ListofGrantsAndContracts.html> հասցեով: